

ԸՆԴԱՐԻ ԴՈՎԼԱԹԸ ԸՆԴԱՐՈՒՄԸ ԿԸՄՆԱ / Հայ ժողովրդական հեքիաքներ, Հատոր VIII /  
Գուգարք (Լոռի), Լոռու բարքառ (խոսվածք)

Ըլում ա չի ըլում՝ մի հարուստ թգավոր: Էն դայդի հարուստ ա ըլում, որ ոսկին ու էրծաթը  
ջորենով ու ուղտերով ա կրելիս, տուն ածելիս ըլում: Էս թգավորը ինչ դդար ոսկի, էրծաթ,  
մարմար ու անզին քար ա ունենում, չիմ հվաքում ա, մի ամարաթ կանգնացնում, ո՞նչ  
տեհնված, ո՞նչ լսված:

Պատերն էրծաթ ա շինում, տակը մարմար քարից, կտուրը ոսկուց: Եբոր շինել ա տալիս,  
պրծնում, քաղցի միջին ինչոր վենձամարդ կա, չիմնուն էլ կանչում ա ու մի լավ հրսանիք  
սարքում: Եբոր քեփներու չաղ վախտն ա ըլում, մին-մին հարցնում ա մնձրած մարդկերանցը,  
թե էն թահրի տուն ո՞րդի են տեհել, ո՞վ ունի նրա ամարաթի պէս ամարաթ:

Չիմ էլ ասում են.— Թգավորն ապրած կենա, քու ամարաթն ու նմանը ո՞նչ տեհած ենք, ո՞նչ  
լսած. ամեն մարդի հունար չի ոսկուց ու էրծաթից, անզին քարից քոշկ ու սարահի շինել:

Եբոր չիմ էլ թգավորին գովում են, պրծնում, էն դեն մի Հլուր ա վե կենում ու ասում.—

Թգավորն ապրած կենա, քու ամարաթն աննման ա, հմա ի՞նչ ամեմ, որ մի պկասութին ունի,  
որ ո՞չով բրավորդ չի արավ:

— Ասա՝ տենամ, ի՞նչ պկասութին ունի,— ասում ա թգավորը հմբարտ-հմբարտ:

Հլուրն ասում ա.— Թգավորն ապրած կենա, ամեն բանը լավ ա, հմա զուր տեղն ես դուռը  
շինել տվել:

Եբոր լսում են Հլուրի խոսքերը, փորիսոցն ընգնում ա նրանց մեջը:

— Դեռ լավ լսեցեք, Էդնա վրես ծիծաղեցեք,— ասում ա Հլուրը,— որ ամարաթը դուռը չեր  
ունեցել, թգավորը հավիդենս-հավիդենից միջին կմներ, հմա հմի կմեռնի, էս ոսկին ու էրծաթը  
էստի կթողնու, իրեք գագ պատանը կառնու ու էս դոնտվը դուս կերթա...

Էս որ լսում ա թգավորը, մատը կծում ա, շատ տիրում: